



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ**

«16» դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ.Անանյան

ՍՅ-ԳԲԽ-46/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-1/15238-16 գրությամբ ներկայացված «Գեոդեզիստ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01824964) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 13.08.2015թ. թիվ 1/73-1/21557-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գեոդեզիստ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.08.2015թ. ԴՎԱ/1890 գրության պատճենը:

Կենտրոնը 20.05.2016թ. թիվ 02/04.1/1968-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2015թ. թիվ 1/73-1/21557-15 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է «Գեոդեզիստ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (23.07.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.05.2016թ. թիվ 1/73-1/15238-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է կազմակերպել «Գեոդեզիստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Միաժամանակ Նախարարությունը նույն գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ համաձայն www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվության՝ գրությամբ ներկայացված մասնակիցը խախտումը թույլ տալու պահից՝ 23.07.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/14» ծածկագրերով գնման ընթացակարգերին:

2. «Գեոդեզիստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 20.08.2015թ. թիվ 01/04.1/12367-15 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է Ընկերությանը:

«Գեոդեզիստ» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Պետրոսյանը 22.09.2015թ. թիվ 09/3083-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ 09.07.2015թ. ենթարկվել է ավտովթարի, որի հետևանքով կրել է առողջական և նյութական վնասներ, գտնվելով ծանր սթրեսային վիճակում, ունենալով բարձր ջերմություն և ճնշում, չի կարողացել կատարել տվյալ ամսվա փոխանցումները, քանի որ բանկում հաստատված է միայն իր ստորագրությունը: Կազմակերպությունը պատշաճ կատարել և կատարում է հարկային պարտավորությունները և սնանկ չէ: Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է հարկային պարտավորության ուշացումը համարել հարգելի և Ընկերությանը չգրկել գնումների մրցույթներին մասնակցելու իրավունքից:

«Գեոդեզիստ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 21.06.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-46/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 10.08.2015թ. ԴՎԱ/1890 գրությամբ հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ ներկայացրած միակ մասնակից «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից 30.07.2015թ. ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: 04.08.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է համապատասխան եզրակացությունը, ըստ որի «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, որի հիման վրա հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 21.06.2016թ. ժամը 17:30-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-46/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-1/15238-16 գրությամբ ներկայացված «Գեոդեզիստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **23.07.2015թ.** հայտ է ներկայացրել «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն:

2. «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (**23.07.2015թ.**) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 30.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Գեոդեզիստ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 2015թ. հուլիսի 23-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա՝ դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 123,684 ՀՀ դրամի չափով:

5. «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն 10.09.2015թ. և 18.09.2015թ. հայտեր է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված համապատասխանաբար՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/14» ծածկագրերով գնման ընթացակարգերին:

5. ՍՑ-ԳԲԽ-46/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-1/15238-16 և 13.08.2015թ. թիվ 1/73-1/21557-15

գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 10.08.2015թ. ԴՎԱ/1890 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 30.07.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Գեոդեզիստ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 2015թ. հուլիսի 23-ի դրությամբ, 123,684 ՀՀ դրամի չափով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Հաշվի առնելով վերագրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Գեոդեզիստ» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 23.07.2015թ. հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Գեոդեզիստ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնն արձանագրում է, որ «Գեոդեզիստ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ ցուցակում ներառելու երկու հիմքերը:

Մասնավորապես, «Գեոդեզիստ» ՍՊԸ-ն խախտումը թույլ տալու պահից՝ **23.07.2015թ.**-ից հաշված մեկ տարվա ընթացքում՝ **10.09.2015թ.** և **18.09.2015թ.** հայտեր է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված համապատասխանաբար՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-19/14» ծածկագրերով գնման ընթացակարգերին, այսինքն Ընկերության կողմից 23.07.2015թ. թույլ է տրվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով սահմանված խախտում և միևնույն ժամանակ առկա է առաջին խախտումը թույլ տալուց հետո մասնակցի կողմից 10.09.2015թ. և 18.09.2015թ. ներկայացված հայտեր:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով, (...) եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ (...):**

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-1/15238-16 գրությամբ ներկայացված «Գեոդեզիստ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01824964) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 (վեց) ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-46/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Դավթյան